**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4**

**« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/17» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ**

ք. Երևան

12.04.2019թ.
ժամը 11⁰⁰

Մասնակցում էին՝

**Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու (ԳԱՊ)՝**

ՀՀ ՊՆ ԿԾ և ՁԲ վարչության պետի տեղակալ Ա. Մուրադյանը,

**գնահատողներ՝**

ՀՀ ՊՆ ԿԾ և ՁԲՎ ՁԲՖԿ ծառայության պետ Ա. Պապյանը,

ՀՀ ՊՆ ԿԾ և ՁԲՎ ԿԾԲ գլխավոր մասնագետ Ս. Սարգսյանը,

**Գնումները համակարգող՝**

ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության աշխատանքների և ծառայությունների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի պետի պաշտոնակատար Ա. Սահակյանը:

**« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/17» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.**

(Ա.Սահակյան)

1. Տեղեկություններ հայտ ներկայացրած մասնակիցների մասին.
2. «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԳՀԱՊՁԲ 10/17» ծածկագրով ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.
3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.
4. Ներկայացված գնային առաջարկներիի հիման վրա «ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-10/17» ծածկագրով ընթացակարգի 1-ին և այլ տեղեր գրաղեցրած մասնակիցների որոշման մասին.
5. Տեղեկություններ՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.
6. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:*

**1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակիցների մասին.**

(Ա.Սահակյան)

1.1 ՀՀ ՊՆ կարիքների համար **էլեկտրական սարքավորումների** ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/17» ծածկագրով ընթացակարգին սահմանված ժամկետում էլեկտրոնային հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

| Հ/հ | Մասնակիցների անվանում |
|---|---|
| 1 | «Ա-2» ՍՊԸ |
| 2 | «Երվադա» ՍՊԸ |
| 3 | «ԷԼԿՈՄՊ» ՍՊԸ |
| 4 | «ՆԻԿՕ-ՏԵԿ» ՍՊԸ |
| 5 | «ՌԱՖ-ՕՁԱԽ» ՍՊԸ |
| 6 | «Սպեցմաշ» ՍՊԸ |
| 7 | «Վարբադ» ՍՊԸ |
| 8 | Գրիգոր Այվազյան ԱՁ |
| 9 | Վոլոդյա Նիկողոսյան ԱՁ |

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:*

**2 .« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/17» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.**

(Ա.Սահակյան)

2.1 Մասնակիցների էլեկտրոնային հայտերը **www.armeps.am** կայքի կողմից համարվել են հետագա գնահատման համար ընդունելի:

2.2 Մասնակիցների էլեկտրոնային հայտում հրավերով պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերն առկա են:

2.3 Մասնակիցների հայտերով ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/17» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին (պահանջներին), բացառությամբ հետևյալ դեպքերի՝

ա) «Երվադա» ՍՊԸ-ի հայտով ներկայացված՝ 13-րդ չափաբաժնի (Դիզել գեներատոր (էլեկտրական գեներատոր 60Կվտ)) գնային առաջարկում (Հավելված N5) «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԳՀԱՊՁԲ-10/17» ծածկագրի փոխարեն նշված է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԳՀԱՊՁԲ-10/18»:

բ) «ՆԻԿՕ ՏԵԿ» ՍՊԸ ի հայտով ներկայացված բոլոր փաստաթղթերում (Հավելված N1, Հավելված N2, Հավելված N2.1, Հավելված N3, Հավելված N4 և Հավելված N5) նշված չեն ընկերության ղեկավարի (տնօրենի) անունը և ազգանունը, սակայն այդ փաստաթղթերը էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատվել է Խաչատրյան Մասիսի կողմից, ուստի պարզ չի դառնում, թե արդյոք նշված անձը հանդիսանում է ընկերության տնօրենը: Անհրաժեշտ է ներկայացնել գրավոր հավաստում, որ նշված փաստաթղթերը հաստատած անձը հանդիսանում է սույն ընկերության տնօրենը, իսկ լիազորված անձ լինելու դեպքում անհրաժեշտ է ներկայացնել սահմանված կարգով հաստատված լիազորագիր:

Ելնելով վերոգրյալից՝ **19.04.2019թ.**-ին գնահատող հանձնաժողովը որոշեց՝

2.3.1 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40 րդ կետի 4 րդ ենթակետի պահանջները՝ «Երվադա» ՍՊԸ-ի՝ 13-րդ չափաբաժնի (Դիզել գեներատոր (էլեկտրական գեներատոր 60Կվտ)) համար ներկայացրած հայտը գնահատել անբավարար և մերժել:

2.3.2 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41 րդ կետի պահանջները՝ մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը էլեկտրոնային եղանակով դրա մասին տեղեկացրեց «ՆԻԿՕ-ՏԵԿ» ՍՊԸ-ին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել նշված անհամապատասխանությունները:

Սահմանված ժամկետում «ՆԻԿՕ ՏԵԿ» ՍՊԸ-ն շտկեց արձանագրված անհամապատասխանությունները և 23.04.2019թ.-ին նիստը շարունակվեց:

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:*

**3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին**

(Ա. Սահակյան)

3.1 «Գնումների մասին» ՀՀ օրենքի և ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանող գնային առաջարկ ներկայացրած մասնակիցների գնային առաջարկների մասին տեղեկատվությունը ներկայացված է սույն արձանագրության մաս կազմող Հավելված N1-ում:

3.2 Մասնակիցների գնային առաջարկների հաշվարկման ճշտությունը /հայտով ներկայացված գնային առաջարկների թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը/, ինչպես նաև հաշվարկման թվաբանական ճշտությունները համապատասխանում են /ճիշտ են/:

3.3 **23.04.19թ.** ին, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, սույն ընթացակարգի հրավերի 1-ին մասի 7.6 և 7.7 կետերի պահանջները, գնահատող հանձնաժողովը որոշեց կասեցնել նիստը և առաջարկված գների նվազեցման նպատակով 29.04.2019թ. ժամը 12⁰⁰-ին ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԳՖՁ վարչության նիստերի դահլիճում (ք. Երևան, Բագրևանդի 5) կազմակերպել միաժամանակյա բանակցություններ՝

ա) «Ա 2» ՍՊԸ ի հետ՝ 1 ին և 2 րդ չափաբաժինների մասով, քանի որ հայտ էր ներկայացրել միայն մեկ մասնակից,

բ) «ԼԱԿՈՍՏ» ՍՊԸ ի հետ՝ 7-րդ, 8 րդ, 9-րդ և 10-րդ չափաբաժինների մասով և Գրիգոր Այվազյան ԱՁ-ի հետ՝ 10-րդ չափաբաժնի մասով, քանի որ ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են նշված չափաբաժինների համար նախատեսված ֆինանսական միջոցները:

Նույն օրը գնահատող հանձնաժողովի քարտուղարը վերոնշյալ մասնակիցներին էլեկտրոնային ձևով միաժամանակ ծանուցեց գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման օրվա, ժամի և վայրի մասին:

3.4 29.04.2019թ. ժամը 12⁰⁰ ին նախատեսված բանակցություններին վերոնշյալ մասնակիցները չներկայացան և վերջիններիս ներկայացրած գնային առաջարկները մնացին անփոփոխ:

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:*

**4. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/17» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի 1-ին և այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.**

(Ա. Սահակյան)

4.1 Հայտերի բացման նիստի ավարտի օրը՝ **30.04.2019թ.**-ին, «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/17» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի որոշմամբ ներկայացրած գնային առաջարկների հիման վրա ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցներ ճանաչվեցին հետևյալ մասնակիցները՝

ա) «Ա 2» ՍՊԸ-ն՝ 1 ին և 2-րդ չափաբաժինների մասով,

բ) «ՌԱՖ ՕԶԱԽ» ՍՊԸ-ն՝ 11-րդ և 12-րդ չափաբաժինների մասով,

գ) «Վարբադ» ՍՊԸ ն՝ 13-րդ չափաբաժնի մասով:

Բավարար գնահատված մյուս մասնակիցները ճանաչվեցին հաջորդ տեղեր զբաղեցրած մասնակիցներ՝ ըստ ներկայացրած գնային առաջարկների շահավետության:

4.2 Գնահատող հանձնաժողովի որոշմամբ՝

4.2.1 «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/17» ծածկագրով ընթացակարգը 3-րդ, 4-րդ, 5-րդ և 6-րդ չափաբաժինների մասով հայտարարվեց չկայացած, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը (ոչ մի հայտ չի ներկայացվել):

4.2.2 «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԳՀԱՊՁԲ 10/17» ծածկագրով ընթացակարգը 7-րդ, 8-րդ, 9-րդ և 10-րդ չափաբաժինների մասով հայտարարվեց չկայացած հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1 ին կետը (հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պայմաններին):

4.3 Հանձնաժողովը որոշեց հրապարակել հայտերի գնահատման նիստի արդյունքները և առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներին առաջարկել ներկայացնելու «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/17» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հավաստող (հրավերի 2-րդ մասի (հայտը պատրաստելու հրահանգի) 3-րդ բաժնով նախատեսված) փաստաթղթերը:

4.4 Հանձնաժողովը որոշեց Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում ներկայացնել առաջին տեղը զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ:

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:*

**5. Տեղեկություններ՝ հայտի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին**

(Ա.Սահակյան)

5.1 Մասնակիցների կողմից հայտերի վերաբերյալ հարցումներ չեն կատարվել:

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:*

**6. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.**

(Ա.Սահակյան)

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԳԱՊՁԲ 10/17» ծածկագրով ընթացակարգի հաջորդ նիստը հրավիրել ոչ ուշ, քան 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից հրավերով նախատեսված փաստաթղթերը հանձնաժողովի կողմից գնահատելու վերջնաժամկետի օրը ժամը $11^{00}$-ն, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:*

Գնահատող (ԳԱՊ) — Ա. Մուրադյան

Գնահատող — Ա. Պապյան

Գնահատող — Ս. Սարգսյան

Գնումները համակարգող — Ա. Սահակյան

Հավելված N1

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/17» ծածկագրով գնման ընթացակարգի գնային առաջարկներ

ՀՀ դրամ

| Հ/Հ | Գնման առարկա | Չ/մ | Քանակ | Ընդհանուր (նախահաշվային) գին | Մասնակիցների անվանումը | Գին (առանց ԱԱՀ) | ԱԱՀ | Գինը (ԱԱՀ-ով) | Ծանոթություն | 1 ին տեղ զբաղեցրած մասնակից |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Բազմասակագնային միաֆազ էլեկտրական հաշվիչ ՍԷՄ-1 | հատ | 100 | 2,765,000 | «Ա-2» ՍՊԸ | 1,750,000 | 350,000 | 2,100,000 | բանակցություն՝ 1 գնային առաջարկ | «Ա-2» ՍՊԸ |
| 2 | Բազմասակագնային եռաֆազ էլեկտրական հաշվիչ ՍՏԷՄ-3Կ | հատ | 50 | 3,550,000 | «Ա-2» ՍՊԸ | 2,500,000 | 500,000 | 3,000,000 | բանակցություն՝ 1 գնային առաջարկ | «Ա-2» ՍՊԸ |
| 3 | Էլեկտրական շղթայի ստուգման սարքեր (Հոսանքի չափիչ սարք (կլեշ)) | հատ | 30 | 240,000 | - | - | - | | Ոչ մի հայտ չի ներկայացվել: | Չկայացած |
| 4 | Էլեկտրական շղթայի ստուգման սարքեր (Ամպերվոլտմետր) | հատ | 50 | 250,000 | - | - | - | - | Ոչ մի հայտ չի ներկայացվել: | Չկայացած |
| 5 | Միջին լարում ունեցող վահանակներ (Փոխանջատիչ 250Ա) | հատ | 30 | 1,950,000 | - | - | - | - | Ոչ մի հայտ չի ներկայացվել: | Չկայացած |
| 6 | Միջին լարում ունեցող վահանակներ (Փոխանջատիչ 400Ա) | հատ | 30 | 2,400,000 | - | - | - | - | Ոչ մի հայտ չի ներկայացվել: | Չկայացած |
| 7 | Կենտրոնախույս պոմպեր (Կենտրոնախույս պոմպ Կ50-32-125, 1.5Կ6) | հատ | 10 | 602,550 | «ԷԼԿՈՄՊ» ՍՊԸ | 2,000,000 | 400,000 | 2,400,000 | բանակցություն՝ նախահաշվային գնից բարձր գնային առաջարկ | Չկայացած |
| 8 | Կենտրոնախույս պոմպեր (Կենտրոնախույս պոմպ Կ65-50-160, 2Կ6) | հատ | 10 | 1,442,000 | «ԷԼԿՈՄՊ» ՍՊԸ | 2,700,000 | 540,000 | 3,240,000 | բանակցություն՝ նախահաշվային գնից բարձր գնային առաջարկ | Չկայացած |
| 9 | Կենտրոնախույս պոմպեր (Կենտրոնախույս պոմպ Կ80-65-160, 3Կ9) | հատ | 5 | 903,825 | «ԷԼԿՈՄՊ» ՍՊԸ | 1,825,000 | 365,000 | 2,190,000 | բանակցություն՝ նախահաշվային գնից բարձր գնային առաջարկ | Չկայացած |
| 10 | Կենտրոնախույս պոմպեր(Կենտրոնախույս պոմպ Կ100-80-160, 4Կ12) | հատ | 5 | 1,740,700 | Գրիգոր Այվազյան ԱՁ | 1,850,000 | - | 1,850,000 | բանակցություն՝ նախահաշվային գնից բարձր գնային առաջարկ | Չկայացած |
| | | | | | «ԷԼԿՈՄՊ» ՍՊԸ | 2,900,000 | 580,000 | 3,480,000 | | |
| 11 | Ձեռքի էլեկտրամեխանիկական գործիքներ (Կտրող սարք (բալգարկա)) | հատ | 40 | 1,800,000 | Վոլոդյա Նիկողոսյան ԱՁ | 1,700,000 | - | 1,700,000 | | «ՌԱՖ-ՕԶԱԽ» ՍՊԸ |
| | | | | | «ՌԱՖ-ՕԶԱԽ» ՍՊԸ | 1,240,000 | 248,000 | 1,488,000 | | |
| 12 | Ձեռքի էլեկտրամեխանիկական գործիքներ (Էլ. շաղափ (դռել)) | հատ | 40 | 1,000,000 | Վոլոդյա Նիկողոսյան ԱՁ | 970,000 | - | 970,000 | | «ՌԱՖ-ՕԶԱԽ» ՍՊԸ |
| | | | | | «ՌԱՖ-ՕԶԱԽ» ՍՊԸ | 700,000 | 140,000 | 840,000 | | |
| 13 | Դիզել գեներատոր (Էլեկտրական գեներատոր 60Կվտ) | հատ | 1 | 5000000 | «Երվանդա» ՍՊԸ | 5,000,000 | 1,000,000 | 6,000,000 | Մերժված՝ սխալ գնային առաջարկ | «Վարբադ» ՍՊԸ |
| | | | | | «ՆԻԿՕ-ՏԵԿ» ՍՊԸ | 3,740,000 | 748,000 | 4,488,000 | | |
| | | | | | «ՌԱՖ-ՕԶԱԽ» ՍՊԸ | 4,158,330 | 831,666 | 4,989,996 | | |
| | | | | | «Սպեցմաշ» ՍՊԸ | 4,305,000 | 861,000 | 5,166,000 | | |
| | | | | | «Վարբադ» ՍՊԸ | 3,150,000 | 630,000 | 3,780,000 | | |